ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 17

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

18.11.2024թ. **ք.Վանաձոր**

Նիստը վարում էր Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը
Արձանագրում էր փաստաթղթաշրջանառության բաժնի պետ Ս.Մակարյանը

Մասնակցում էին

Հ.Ավետիսյանը - մարզպետի տեղակալ
Ն.Թովմասյանը - մարզպետի խորհրդական
Գ.Քարհանյանը - մարզպետի խորհրդական
Կ.Աշրաֆյանը - մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Կ.Ադամյանը, Մ.Դալլաքյանը, Ռ.Պողոսյանը, Ա.Մատինյանը, Ռ.Մարգարյանը, Մ.Խեչումյանը, Ա.Թումանյանը, Մ.Սարգսյանը, Է.Հախվերդյանը, Ա.Բաղդասարյանը, Գ.Բաղդասարյանը, Գ.Մելիքսեթյանը, - մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

Ը ն թ ա ց ի կ հ ա ր ց ե ր

Ե լ ույ թ ու ն ե ց ա ն՝

1. ՀՀ Լոռու մարզպետ Ա.Ղազարյանը ներկայացրեց մարզպետի նորանշանակ խորհրդական Գարեգին Քարհանյանին, շնորհավորելով պաշտոնի նշանակվելու կապակցությամբ՝ մաղթեց բեղուն, համագործակցային աշխատանք, տրված հանձնարարականների և պարտականությունների կատարման ու խնդիրների լուծման ուղղությամբ: Մարզպետի խորհրդական Գ.Քարհանյանը շնորհակալություն հայտնեց վստահության համար և պատրաստակամություն՝ առաջադրված խնդիրները լուծելու հարցերում:

Մարզպետը ներկայացրեց նաև մի քանի նկատառումներ տրված հանձնարարականների կատարման, անձնական պատասխանատվության, կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու պահանջի, բարձրացված հարցերին սահմանված կարգով, ժամկետներում և օրենսդրության պահանջներին համապատասխան լուծում տալու անհրաժեշտության վերաբերյալ:

Հանձնարարվեց նաև ուշադրություն դարձնել Կառավարության նիստերի ընթացքում քննարկվող ոլորտային հարցերին, արված դիտողություններն ու քննարկումների արդյունքները հաշվի առնել, հետևություններ անել և միջոցներ ձեռնարկել՝ թերությունների ու բացթողումների վերացման ուղղությամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանը ներկայացրեց վարչության կողմից իրականացված աշխատանքների և առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն և առաջարկություններ դրանց լուծման ուղղությամբ, մասնավորապես հայտնելով, որ հաշվետու ժամանակաշրջանում Լոռու մարզի համայնքների 32 օբյեկտներում իրականացվել է մշտադիտարկում 2022-2024թթ. սուբվենցիոն ծրագրերի ուսումնասիրման նպատակով, արդյունքում թերություններ են հայտնաբերվել Գյուլագարակ, Ֆիոլետովո, Լերմոնտովո, Վանաձոր համայնքներում: Նա նաև իր մտահոգությունը հայտնեց պետական բյուջեի միջոցներով իրականացվող Դիլիջան-Վանաձոր ճանապարհի, Գյուլագարակ համայնքի 3 բնակավայրերի 2021թ. տուֆ քարով սալարկման ծրագրի, Ֆիոլետովո համայնքի կոյուղագծի, Ստեփանավան համայնքի Կաթնաղբյուր և Արմանիս բնակավայրերի մանկապարտեզների շինարարական աշխատանքների որակի և ժամկետների վերաբերյալ:

Տեղեկատվություն ներկայացվեց նաև Աղետի գոտու բնակավայրերում բնակապահովման իրավունքը վերականգնած 37 ընտանիքների բնակարանների ձեռքբերման վերաբերյալ: Նշվեց նաև, որ 22 ընտանիք ստացել է պետական աջակցություն կամ ԲԳՎ, մյուս ընտանիքների մասով՝ գործընթացը շարունակվում է:

2.1 Ներկայացված զեկույցի վերաբերյալ մարզպետը հանձնարարեց առավել հետևողական լինել շինարարության որակի և ժամկետների վերահսկման ուղղությամբ, պահանջել ամենօրյա տեղեկատվության տրամադրում կատարված աշխատանքների վերաբերյալ, մասնավորապես այն ծրագրերի, որոնք խնդրահարույց են (Գյուլագարակ, Ֆիոլետովո, Ստեփանավան, Վանաձոր, Աթան համայնքների ծրագրեր):

2.2 Համապատասխան գրություն ներկայացնել ՀՀ ՏԿԵՆ «Ճանապարհային դեպարտամենտ» ՊՈԱԿ-ին՝ Վանաձոր - Դիլիջան ճանապարհահատվածի վերանորոգման աշխատանքների իրականացման ընթացքում ի հայտ եկած խնդիրների, այդ թվում նաև անհարթությունների առկայության և ճանապարհածածկի վերաբերյալ:

2.2 Լոռու մարզպետի տեղակալներ Գ.Ասրյանին, Հ. Ավետիսյանին, քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Ռ.Մարգարյանին, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Ա.Թումանյանին, զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Ա.Բաղդասարյանին՝

Մեկ անգամ ևս ճշգրտել Վարչապետի այցով նախատեսված, ներկայացված ծրագրերի ցանկը, այցելությունների ժամանակացույցը և գրաֆիկը, նախապես լինել այդ օբյեկտներում, ստուգել իրականացվող աշխատանքների որակը և ընթացքը, ներառելով նաև տուրիզմի ոլորտի և գյուղատնտեսության ոլորտի (խելացի անասնաշենք, ջերմոցային և հյուրատնային տնտեսություն և այլն) և կատարված աշխատանքների վերաբերյալ սեղմ ժամկետում ներկայացնել ամփոփ տեղեկատվություն ու առաջարկություններ:

3. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Մ.Դալլաքյանը ներկայացրեց վարչության կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, մասնավորապես նշելով, որ չնայած անհրաժեշտ միջոցառումների իրականացմանը, սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը որոշ համայնքներում ցածր է և մտահոգիչ (Գյուլագարակ, Վանաձոր, Փամբակ, Ալավերդի), և

այդ ուղղությամբ անհրաժեշտ է կիրառել կոշտ վարչարարություն և ամենօրյա հետևողական աշխատանքներ:

3.1 Լոռու մարզպետը հանձնարարեց մարզպետի տեղակալներ Գ.Ասրյանին, Հ.Ավետիսյանին և գլխավոր քարտուղար Կ.Աշրաֆյանին՝ անձնական վերահսկողություն սահմանել համայնքների ղեկավարների կողմից սեփական եկամուտների հավաքագրման պլանային ցուցանիշները ապահովելու ուղղությամբ, տեղերում ծանոթանալ խնդիրներին, առաջարկել լուծումներ, համայնքների բնակավայրերի վարչական ղեկավարների, իրավաբանական անձանց և ազգաբնակչության հետ անմիջական հանդիպումներ և քննարկումներ կազմակերպել ստանձնած պարտավորությունները սահմանված կարգով և ժամկետներում կատարելու նպատակով և ամենօրյա տեղեկատվություն ներկայացնել արդյունքների վերաբերյալ:

4. Լոռու մարզպետը հանձնարարեց մարզպետի տեղակալներ Գ.Ասրյանին և Հ.Ավետիսյանին՝ անհրաժեշտ և գործուն միջոցներ ձեռնարկել Աղետի գոտում ս.թ. մայիսի 25-26-ին արտակարգ իրավիճակների հետևանքով բնակչությանը հասցված վնասների փոխհատուցման գործընթացի ավարտման ուղղությամբ:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2024-11-19 12:53:23 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ՂԱԶԱՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան
Հեռ. 0322 /4-32-99